# Ս. Էջմիածնի Սինոդի մի նոր կարգադրութեան առթիւ

Նոյնպէս հայ պարբերական թերթերի մէջ հրատարակած է Ս. Էջմիածնի Սինոդի յետագայ կարգադրութիւնը. « Հրաման ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի :

Ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ի Սինոդիս լուսաւորութիւն թեմական առաջնորդին Հայոց Աստրախանի, ի 4 հոկտեմբերի տարւոյս թ. 154, որ ունի զայս օրինակ. « Իրականութիւն էր արդէն, վկայեալ ի բազմաց բազում անգամ, զի վներական անուանեալ հիւանդութիւնք ամենուրեք ծաւալ մեծ ընկալեալ ի ժողովրդականս մեր թէ ի քաղաքացիս եւ թէ ի գիւղականս անգամ թիւնաւորեն եւ քարքայեն զթիզիզական եւ բարոյական կազմ կենաց եւ բարգաւաճման ներկայ եւ ապագայ սերդեան : Հետեւանք այդպիսոյ ծանր աղետ չարեաց է եւ այն՝ զի օր ըստ օրէ բազմանալ խնդիրք պակաւորութեան ի հոգեւոր առեանս մեր այնպիսիք, որք չարժաւթի ծագման իւրանին ունին զանուանութիւն առն եւ զվարակումն կնոջ : Որք ի սրտէ եւ ըստ պարտուց կոչեցեալք են ի ծառայել հատարակութեան, բժիշկք եւ հրապարակասօսք, ի վերջին ժամանակս իրրեւ զմի ի փրկարար միջոցաց համարեն պահանջել յարանց, մտանողաց յամուսնութիւն, զբժշկական վկայական վասն առողջութեան : Զիրադործումն այսպիսւոյ օգտակար առաջարկութեան գտանելով ժամանակակից պէտք անհրաժեշտ պատիւ ունիմ խոնարհաբար խնդրելոյ զհաւանութիւն Սիւնհոդոսիդ Ս. Էջմիածնի վասն սահմանելոյ ի վիճակիս զպահանջումն բժշկական վկայականի վասն առողջութեան արանց, խնդրողաց զիրաւունս մուսնութեան » : ՀՐԱՄԱՑԵԵՒՆ — առեալ ի նկատ, զի յաճախ դէպք լինին, յորժամ մտանողքն յամուսնութիւն վարակեալ գոլով վներական ախտիւք, վարակեն յետ ամուսնութեան եւ զկնոջեալսս իւրանց, լինելով պատճառ քաչքայման առողջութեան նոցա եւ զաւակաց ծնելոց յայդպիսեաց ամուսնութեանց եւ իրրեւ անմիջական հետեւանք այդոբիկ յերեւան գան անբաղդութիւն եւ կործանումն ընտանեաց, յաճախ լինելով առիթ եւ պատճառ ամուսնալուծութեան. ուստի Սինոդս պատուիրէ թեմական վիճակաց ամենել այսուհետեւ անօրէնութիւն ըստ թեմից իւրեանց պահանջել յարանց բնակելոց ի քաղաքս եւ ի մտանելն նոցա յամուսնութիւն բժշկի վասն առողջութեան նոցին եւ ապա տալ հրաման ամուսնութեան նոցա. իսկ յանձանց բնակելոց ի գիւղս պահանջել զնոյնպիսի վկայականս բժշկի, եթէ գոն հնարաւորութիւնք առ այն : Ի 13-ն Նոյեմբերի 1904 ամի ի Ս. Էջմիածին : »

Մեր կողմից գտնում ենք յիշեալ կարգադրութիւնը անհպատակայարմար եւ Սինոդի իրաւասութեան սահմանից դուրս յետագայ պատճառներով :

Նախ՝ Մեր եկեղեցու յետին անդամին եւս յայտնի է, որ հիւանդութիւնը չէ ընդունուում պատճառ ամուսնալուծութեան եւ վներական ախտը ոչ թէ ինքնին իրրեւ հիւանդութիւն է հանդէս գալի ամուսնալուծութեան պահանջով, այլ իրրեւ պարզ ապացոյց ամուսիններից մէկին ու մէկի ամուսնական անհաւատարմութեան : Ուրեմն ամուսնալուծութեան պատճառը հիւանդութիւնը չէ, այլ շնութիւնը, պոռնկութիւնը :

Երկրորդ՝ եթէ հիւանդութիւններն ընդունէին իրրեւ հիմք ամուսնալուծութեան, ինչո՞ւ պէտք է բաց մնային թոքախտաւորները, ալկոհոլիկները, լուսոտները եւայլն :

Երրորդ՝ Ո՞ւր եւ ո՞ր տեղի բժիշկներն ու հրապարակախօսներն են համարել ամուսնացողներից, այն էլ միայն այրերից, բժշկական վկայական պահանջելը փրկարար միջոց : Մեր մամուլի մէջ այդպիսի պահանջների մասին չենք կարդացել. իսկ աւելի քաղաքակրթած աշխարհներից եւ ոչ մէկում այդպիսի կարգադրութիւն չկայ եղած :

Չորրորդ՝ եթէ բժշկական վկայական պահանջելը փրկարար միջոց է, ինչո՞ւ այն ժամանակ պահանջել միայն այրերից: Բժշկի վկայականով ամուսնացած այրը, եթէ մի քանի ժամանակից յետոյ վարակւի ու վարակի իր կնոջը — չէ՞ որ լիակատար միջոց կունենայ ապացուցելու, որ իր կինն է իրեն վարակել, քանի որ ինքը ամուսնութեան ժամանակ ունեցել է ապացոյց իր առողջութեան, իսկ կինը չէ ունեցել : Ո՞ւր կը մնայ արդարութիւնը :

Հինգերորդ՝ Ի՞նչ են ասում վիճակագրական թւանշանները. վարակումը ամուսնութիւնից միայն առաջ է գնում թէ մեծ մասամբ յետոյ: Բայց մեզանում ո՞վ է այդ խեղճ թւանշաններին արժէք տալի կամ ո՞վ է խնդիր յարուցանելուց ու վճռելուց առաջ ուսումնասիրողը : Պրպտեցէք կենաց դրքի էջերը եւ կը տեսնէք որ ամուսնացողներից անհամեմատ մեծամասնութիւնը վարակած են առողջ ամուսնութիւնից յետոյ: Վարակած քաղաքացին չը բժշկւած՝ չի ամուսնանալ, իսկ գիւղացիք պակաւում են շատ կանուխ :

Վեցերորդ՝ Քրիստոնէական եկեղեցին բժշկութեան հիմք ընդունում է հաւատը (աւ. 4

digitised by A.R.A.R.@

այդ թէ ոչ — այլ խնդիր է)։ Ի՞նչ ասելով այսօր եկեղեցականը եկեղեցական իշխանութեան ձեռքով եկեղեցական սահմաններում տարաձերժում է այդ հիմքը եւ տալիս է այն միայն աշխարհիկ գիտութեանը։ Դրանով չէ՞ սաւում, որ մենք հոգեւորականներս կորցրած ենք մեր բարոյական ազդեցութիւնը մեր ժողովրդի վրայ, կամ որ կրօնն ու հաւատը դադարել են ներգործութիւն ունենալուց քրիստոնեաների վրայ այն աստիճան, մինչ ախտով ու ցաւով լցած մէկը չէ վախենում Աստծուց եւ, սուրբ խորհրդի տակ մոնելով, գնում է ախտաւորելու-փչացնելու մի այլ անմեղ անձի։ Եթէ այս այսպէս է — էլ ինչո՞ւ են ալէտք կամ ի՞նչ արժէք ունին պասկի աղօթքները ու օրհնութիւնները։

Եօթերորդ՝ Ամուսնութեան հիմքը ամուսնացողների փոխադարձ սէրն է եւ ազատ ընտրութիւնը։ Եւ այս սէրն ու ընտրութիւնը հասուն-նութեան արդիւնք պիտի լինին։ Քրիստոնէական եկեղեցին անչափահասներին չէ տալի իրաւունք ամուսնութեան։ Հետեւաբար՝ « որք ի սրտէ եւ ի պատուոյ կոչեցեալք են ի ծառայել հասարակութեան, բժիշկք եւ հրապարակախօսք» (իսկ հոգեւորականք՝ ո՞չ։) պտղատու որ են նպաստել թէ քրիստոնէի եւ թէ առ հասարակ ամենայն անհատական զարգացման, հասունութեան ասիճանը բարձրացնելու, այլ ոչ թէ զանազան պասպորտների ու պատենների խարուսիկ ու մեռնող պայմանների տակ երազական բարօրութիւններ տալ որոնելու։ Այսօր ոչ քաղաքակրթած Եւրոպան, ոչ Անգլիան, ոչ Ամերիկան ամուսնացողներից այդպիսի վկայական պահանջելու օրէնք եւ կարգադրութիւն չունին, եւ այդ՝ ոչ թէ այն պատճառով, որ այդպիսի խնդիրներ չեն յարուցած, այլ որ այդպիսի ձեւական պատենների ու վկայականները վաղուց արդէն անմիտ եւ աննպատակայարմար են ճանաչած։ Եւ զարմանալի չէ՞, որ հենց այն ժամին, երբ Ռուսիայի մէջ պասպորտներ վերացնելու խնդրի բարձումն այնքան սրտի բերկրութեամբ սպասում են ողջունելու առաջադիմականներն ու ազատամիտները, մերոնք, մեր առաջադիմական ու ազատամիտ կարծածները գուցէ աւելի մեծ բերկրանքով ողջունում են ամուսնական կապի մէջ Արիստակէս սրբազանի կողմից առաջարկած մի նոր պատենա, — մի նոր պասպորտ-վկայական — մի նոր ձեւականութիւն աւելացնելը։ Ձեւականութիւն՝ որ այնքան նսեմացնում է ազատ սիրոյ եւ ազատ ընտրութեան վսեմ պատկերը, մի քանի բացառական երեւոյթների պատճառով։ Եթէ այսպիսի վկայականները կը վերացնեն հիւանդութիւնները, ինչո՞ւ այն ժամանակ չպահանջել ամուսնացողներից ներկայացնել նախապէս եւ բարեբարոյութեան վկայական ռսիիանուրիւնից .՝.՝.՝ Ո՞ւմ յայտնի չէ, որ ընտանիքների աւերելու, ամուսնալուծական խնդիրների եւ ամեն չարիքների բուն պատճառը անբարոյականութիւնն է։ Եւ ո՞վ պիտի տայ այդ վկայականը, եթէ ոչ ոտիկանութիւնը ... քանի որ հոգեւորականութիւնը դադարել է ժողովրդի վրայ բարոյական ազդեցութիւն ունենալուց, քանի որ հաւատը չքացել է եւ քանի որ ամուսնացողները ընտրութիւն անելու համար տհաս ու անբարեմիտ են հռչակւում եւ վերջապէս քանի որ վկայականներն են փրկարար միջոց ճանաչւում, վկայականները, որ չատ չատ՝ մի որոշեալ ժամի համար են վկայած. իսկ բուն բարոյականը, որ մարդուս է՝ն հաստատուն գանձն է, մոռացութեան է տրուած . . .

Քրիստոնէութեան-կրօնի ամբողջ հոգածութեան առարկան, նպատակակէտը մարդու հոգեկան բարոյական աշխարհի մաքրումն ու ազնուացումն է։ Երբ մէկը ախտաւոր, հիւանդ է եւ առանց խղճահարութեան քայլ է անում անբաղդացնելու մի ուրիշին հետն ամուսնանալով կամ նոյն իսկ վարակիչ յարաբերութիւն հաստատելով, ասել է, որ նա անբարոյական, փչացած անձն է։ Ոչ մի վկայական այդպիսի անձանց չէ կարող ազատ պահել իրենց ախտեցուցիչ ազդեցութիւնից։ Այդպիսիների ամուսնութիւնները չօրհնաւորելով կամ չօրհնելով, մենք՝ հոգեւորականներս բնա՛ բնա՛ չենք արգելում նրանց՝ այդ վարակածներին չվարակելու ուրիշներին։ Եթէ եկեղեցու նպատակն է, վկայական պահանջելով, վարման առաջն առնել, ընտանիքներ փրկել, չէ հասնում եւ չէ կարող դրանով հասնել իր նպատակին, քանի որ վարակածը, ինքն իր մէջ չունենալով իրեն զսպելու սանձը, ունի ամեն միջոց վարակելու չատ չատերին եւ նոյն իսկ վատասերած սերունդ թողնելու։ Ազատ կենակցութեան, ազատ կամ գաղտնի յարաբերութեան, կեղծ վկայութեան եւ նոյն իսկ կրօնափոխութեան միջոցներով։ Իսկ եթէ եկեղեցին, վկայական պահանջելով, միայն մասածում է ամուսնալուծական խնդիրները պակասեցնել իր առեանների միջից, թողնելով այն վարակածներին իրենց բաղդին կեանքի մէջ, դա մի ուրիշ ակ ձեռքերը հրապարակով եւ թմբուկներով լւանալու պիղատոսական սրբողութիւն է — աւելին եթէ չէ։

Ողջունելի՛ եւ սրտանց ողջունելի՛ է մեր մամուլի մէջ այդ խնդրի յարուցումը, որ կը ծառայէ հասարակութեան աչք բանալուն, այլ բնաւ ողջունելի չէ բէշկաս վկայական, այն էլ միայն այրերից, պահանջելու կարգադրութիւնը։

Խօսեցէ՛ք, գրեցէ՛ք, քարոզեցէ՛ք, կարգացէ՛ք ժողովրդին այն ամէն բանի համար, ինչ որ պէ՛տք է, ինչ որ անհրաժե՛շտ է նրա բարոյական եւ ընկերաբարական բարեկեցութեան համար։ Հրատարակեցէք գրքոյկներ ու տարածեցէք ժողովրդի մէջ, հրահանգեցէք քարոզներ տալու այդ նիւթի մասին, կազմեցէք ինքներդ լաւ քարոզներ ու ցրուեցէք բոլոր եկեղեցիների մէջ, պատիրելով .որ քարոզելու շնորհ չունեցող քահանաները կարդան այդ գրած քարոզները։ Բաց արէք ամուսնացողների աչքերը, եթէ փակ են, մոքերը՝ եթէ ագէտ են. գիտա-

digitised by A.R.A.R.@

կից արէք հիւանդ ամուսնութիւններից առաջացող հետեւանքներին. կոչում արէք նրանց խղճին, նրանց սրտին. յորդորեցէ՛ք, խրատեցէ՛ք, ուսուցէ՛ք, համոզեցէ՛ք, որ ամուսնութիւնից առաջ ինքնայօրդոր կերպով դիմեն բժիշկներին. եթէ ակարութիւններ ունեն, նախապէս բժշկուեն, եթէ մոլութիւններ ունեն՝ ջանքեր, ճիգեր գործ դնեն դարձի գալու-ուղղուելու եւն. եւն.: Այո՛, արէք եւ անենք այն ամենը, ինչ որ կարո՛ղ է եւ պէ՛տք է ժողովրդի, ամուսնացած թէ չամուսնացած, առողջ մտածութիւնը, բարոյական պարտաճանաչութիւնը, կրօնական մաքրութիւնը, մտաւոր հասունութիւնը առաջ բերել, զարգացնել, բայց զգուշանանք այնպիսի արտաքին ձեւի, պահանջի, վկայականի ու պատնէշի տակ դնելու, ծածկելու բուն էականը, որ միշտ կարելի կը լինի ոչ միայն արտաքուստ կատարել, թուղթը ներկայացնել, եւ այդ ամենով բնաւ նպատակի չհասնել, այլ եւ ընդհակառակը նորանոր կեղծագործութիւնների, աւելորդ ծախքերի, վէճերի ու գայթակղութիւնների դռները առաջ ժողովրդին կանգնեցնել: Քրիստոնէական կրօնն առանց այն էլ ժամանակի ընթացքում, շնորհիւ հոգեւորականներիս՝ «Աստծուն լոկ շրթունքներով մեծարելու» ցուցամոլ յատկութեան՝ սառցրել է իր շունչը, կորցրել է իր կենդանութիւնը ու խեղդուել-կաշկանդուել է այլեւայլ ձեւականութիւնների տակ. այսօր էլ ովսաննաներով է ողջունւում ու ներս բերւում մի նոր ձեւականութիւն, մի նոր վկայական, մի նոր պատնէշ, որ միայն հոգեւորականներիս խղճին քսուող պալասան կարող է նկատուել, այլ ոչ ժողովրդի ցաւերի սպեղանի, որ հոգեւորականներիս դէպի առաւել ձեւական ժողովրդասիրութեան ու ցուցական պարտաճանաչութեան կը տանի, քան թէ ընտանիքների փրկարար դարման կը լինի:

Գանք Ս. Էջմիածնի Սինոդի կարգադրութեանը:

Արիստակէս սրբազան խնդրում է բժշկական վկայականի պահանջը պարտաւորական անելու հաւանութիւնն իր թեմի համար: Սինոդը, եթէ մինչեւ անգամ գտնում էր այդ օգտաւէտ, պիտի թոյլ տար Սրբազան Արիստակէսին իբրեւ ժամանակաւոր փորձ գործ դնելու իր թեմում: Ապա խնդիրը, որոշ քննադատութեան, ուսումնասիրութեան եւ գործնականութեան բովերից անցնելուց յետոյ, եթէ կը հանդիսանար իրօք օգտաւէտ ու նպատակայարմար, նոր այն ժամանակ Սինոդը կը հոգար պատշաճաւոր ճանապարհով ընդհանրացնել տալու հայ եկեղեցու մէջ:

Ասում ենք պաշտօնաւոր ճանապարհով:

Հայ եկեղեցին ամենայն տեղ միեւնոյն կանոններով է առաջնորդւում: Այս կանոնները դրուած ու հաստատուած են տիեզերական ու ազգային ժողո՛վներով: Պաակի նկատմամբ՝ մինչեւ որոշեալ հասակը անչափահաս եւ մինչեւ որոշեալ աստիճանի ազգակցութիւնը չհաս է ճանաչուած. ուստի եւ պսակի օրհնութիւն կատարող պաշտօնեան իրաւունք չունի նրանց պսակելու, ուր էլ որ լինի այդ՝ Ռուսաստան թէ Տաճկաստան, Եգիպտոս թէ Պարսկաստան, Եւրոպա թէ Ամերիկա: Բացառութիւններ կարող են տեղի ունենալ միայն ու միայն ազգից ընտրուած եւ օծութեամբ ծայրագոյն իշխանութիւն ստացած Հայրապետի հաճութեամբ ու թոյլտուութեամբ:

Այսօր Ս. Էջմիածնի Սինոդը նոր կանոն է սահմանում ամուսնացողների նկատմամբ, որ պարտաւորական չէ կարող լինել Ռուսաստանից դուրս գտնուող հայ եկեղեցու համար: Սինոդը կարող է վաղն էլ մի այլ կանոն հաստատել մկրտուողների, պատարագի եւ այլ արարողութիւնների վերաբերութեամբ: Ո՞ւր կը տանի այս կացութիւնը: Կաղաքականօրէն միմեանցից անջատուած մեր եկեղեցին, չի՞ անջատուիլ արդեօք եւ իր կանոններով, իր կարգերով:

Նոյն իսկ եւ այդ ամենից անկախ՝ սկզբունքի խնդիր է – արդեօք Սինոդը իրաւունք ունի՞ մեր եկեղեցուն նոր կանոն տալու. արդեօք Սինոդը բացարձակ օրէնսդրական իշխանութիւն է մեր եկեղեցու նկատմամբ: Ի՞նչպէս է որ դպրոցական ու կալուածական խնդիրներում Ս. Էջմիածնի Սինոդը կոչ է գալի եւ պատսպարանք է որոնում ամենայն Հայոց Հայրապետի ծայրագոյն իրաւանց եւ հովանեաց ներքոյ, իսկ կրօնական այնպիսի խնդրում, ինչպիսին է եկեղեցու եօթն խորհուրդներից մինը՝ ամուսնութիւնը – Սինոդը հանդէս է գալի իբրեւ բացարձակ օրէնսդիր իշխանութիւն: Բացարձակ ենք ասում, որովհետեւ Սինոդն իր վերջին կարգադրութեան իբրեւ հիմք չէ առաջ բերել ոչ տիեզերական եւ ոչ ազգային ժողո՛վների կանոններ, ոչ հայրապետական կոնդակներ եւ ոչ այլ ինչ եկեղեցական: Սինոդը, եթէ իր վերջին որոշմունքը գտնում էր շատ օգտակար եւ անհրաժեշտ, պիտի ներկայացնէր Ամենայն Հայոց Հայրապետի տնօրէնութեանը: Նորին Օծութիւնը, եթէ ազգային ժողով գումարելը ծանր կը գտնէր, իր կոնդակներով կը հարցնէր պատրիարքների, թեմակալ առաջնորդների, նրանց միջոցով քահանաների ու ժողովրդականների կարծիքները եւ ապա մեծամասնութեան որոշմունքը իր հայրապետական հրամանով կը տար տարածել իբրեւ ընդհանրական կանոն հայ եկեղեցու մէջ եւ մի եւ նոյնը կը տար Սինոդին ի հրահանգութիւն: Մեր եկեղեցու օրէնսդրական ճանապարհը այս է, երբ կարելի չէ ընդհանուր ժողովը:

Սինոդը զուտ հոգեւոր խնդիրների մէջ պարտաւորութիւն ունի հրահանգելու մեր եկեղեցու հայրապետների ցուցմունքներով, այլ ոչ թէ նոր կանոններ դնելու իրաւունք ունի. բայց Սինոդը իր նոր որոշմունքը չէ հիմնել կրօնական վկայութիւնների, սկզբունքների ու վարդապետութիւնների վրայ, այլ զուտ առողջապահականի: Այս դէպքում էլ Սինոդը գործել է իրաւազանցութեան պետական օրէնսդրութեան

digitised by A.R.A.R.@

*տեսակէտից: Որովհետեւ Սինօդը, իբրեւ հոգեւոր հիմնարկութիւն, իրաւունք չունի առողջապահական բժշկական սահմաններ մտնելու եւ կարգադրութիւններ անելու, կանոններ տալու։ Եւ վերջապէս ո՞ր իրաւամբ կարող է Սինօդը բժիշկներին պարտաւորացնել վկայականներ տալու։ Յայտնի է, որ օրէնքի մէջ նախատեսնուած են բոլոր այն պարագաները, որոնց մասին բժիշկները պարտաւոր են վկայականներ տալու։ Այդ պարագաների թւում չկան ամուսնացողներին՝ հոգեւոր իշխանութեանը ներկայացնելու համար՝ առողջութեան վկայականներ տալու պարտաւորութիւնները։ Երեւակայեցէք, որ շրջանի բժիշկները (հայ թէ օտարազգի) իրենց պարտաւոր չեն համարում այդպիսի վկայականներ տալը եւ ծխատէր քահանաներն էլ իրենց իրաւունք չեն համարում առանց այդպիսի վկայականի պսակ օրհնելը. — ի՞նչ անի պսակւողը։ Եթէ մեր եկեղեցու մէջ կան նոյն իսկ կրօնական սահմանումներ, որոնց էականն ու ներքինը առողջապահական է, դրանք վարդապետուած ու կառուցուած են հոգեւոր հիմունքների վրայ ու կրօնական վարագոյրների տակ, այլ ոչ այնպէս զուտ ու բացարձակ աշխարհիկ են, ինչպէս Սինօդի վերջին կարգադրութիւնը։ Թերեւս դիտմամբ կապած են ամուսնալուծական խնդրի հետ, որ իրենց իրաւունք համարեն վկայականի կամ այլ պահանջ սահմանելը. սակայն այդ չէ կարող կապուել. քանի որ, ինչպէս վերը յիշատակեցինք, վեներական հիւանդութիւնը իբրեւ հիւանդութիւն չէ, որ դառնում է պատճառ ամուսնալուծութեան, այլ իբրեւ ապացոյց ամուսնական անհաւատարմութեան։*

*Ուստի եւ մարգարէ չպէտք է լինել գուշակելու համար, որ այդ նոր օրէնքը, ամուսնացողներից բժշկական վկայական պահանջելու կանոնը՝ կը մնայ անգործադրելի եւ ինքնին՝ կը հանդիսանայ միայն վկայական մեր սինօդականաց բարի ցանկութիւնների ու ժողովրդասէր ձգտումների։*

*Մ. ա.-ք. ՄԵԼԵԱՆ*

24 Յունվ. 1905 թ. Պարիզ

*Յ. Գ. Այս յօդուածը «Անահիտ»ի համար էի պատրաստել եւ յղել էի արդէն խմբագրութեան, երբ պատահմամբ ձեռքս ընկաւ «Բիւզանդիոն» թերթի համարները, ուր նոյն խնդրի մասին կային գովեստներ ու դիտողութիւններ։ Ուստի ի նկատի ունենալով որ «Անահիտ» զրկուած է Թուրքիա մտնելու դիւրութիւններից, կարեւոր համարեցի յօդուածիս պատճէնն ուղարկելու «Բիւզանդիոն»ի խմբագրութեան, եթէ յարմար կը գտնի, հրատարակելու եւ իր էջերի մէջ։ «Բիւզանդիոն» տպել էր այն* N 2,544 *համարում եւ յաջորդ թւին մէջ նուիրել էր իր կողմից առանձին «Խորհրդածութիւններ», համարելով իմ գրածը՝ «կրկին ու կրկին կարդացուելու արժանի նշանաւոր յօդուած։»*

*Նոյն*

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# Ֆարմանի Ասմանի(*)

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

**Ֆրեսերիք ՄԱՔԼԷՐ**

Կարդայ(1) զբուղբն(2) աղջկանն(3) Ֆարմանն եւ գրէ պատասխանի դստեր թագաւորին այսպէս.

*Անտես կամիս ինձիկ կունահ ցուցանել,*
*Որ չեմ տեսեր աչօքս ոչ սրտէս խորհել,*
*Ոչ ի քուն երազիս ինձիկ գուշակել,*
*Եւ ոչ բանիդ գիտակ եւ ոչ հետեւել։*

*Զը կայ ինձիկ մեղք դու ինծի մեղադրել,*
*Կամիմ կամօքս, սիրտս է(4) ինձ ցանկացել.*
*Աչերս ի քո սրտէդ է ինձ նայեցել,*
*Զիմ տեսն առանց ինձիկ յինէ գողացել։*

*Գիտեմ որ դու այլ գեղեցիկ ես աղւոր,*
*Գեղով եւ պատկերով շնորհօք փառաւոր,*
*Ջերթ աններման ճոհար ակըն լուսաւոր*
*Որ չի կայ այլ երկիր քո պէս հանց աղւոր։*

*Գոված ես հանց երկրի որ ես լըսեցի,*
*Թէ չէ դու ես յինէն անտես 'ւ անյայտնի.*
*Եւ այլ շատ ցանկացայ սըրտովս յօժարի,*
*Ոնց որ դու զիս տեսար ես ըզքեզ տեսի։*

*Ամ թէ մարդ գըտանէ հընար եւ կամ ճար*
*Որ քո սէրդ իմ սըրտիս լինենար սազկար,*
*Նա իմ սըրտիս է կամ եւ հոգուս յօժար,*
*Որ զիմ տեսս ի քեզիկ գըրոյդ ինձ կամեցար։*

*Բայց ես ի յերկիւղէ մեծ թագաւորին*
*Չի կամիմ որ իմ սըրտիս կամքըն կատարին.*
*Ապա թէ որ ուզես զծածուկըն սըրտին,*
*Կամիս զարիւնս հեղուլ տալ թագաւորին։*

(*) Տես Անահիտ, 1904 Թիւ 11։ Պ. Ֆ. Մաքլեր որոշած ըլլալով առանձին հատորով ի լոյս ընծայել «Ֆարմանի Ասման»ի ֆրանսերէն թարգմանութիւնը, մենք պիտի հրատարակենք միայն հայերէն բնագիրը։

(1) Ձեռ. մէջ՝ կարդա (2) Ձեռ. մէջ՝ զբուխբն։

(3) Ձեռ. մէջ՝ աղջկանն։

(4) Ձեռ. մէջ՝ սիրտս է ինձ.

digitised by A.R.A.R.@